ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ երգիչ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Նորայր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտայի հ. 63 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆՈՐԱՅՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ երգիչ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Նորայր Մնացականյանը ծնվել է 1923թ. հունվարի 7-ին, Երևանում:

Նորայր Մնացականյանը հայ ժողովրդական և աշուղական երգարվեստի նվիրյալ է և նրա տարածողներից մեկը: Մնացականյանը երկրպագել է Ջիվանուն, Շերամին, Հավասուն, Շիրինին, սակայն առանձին մտերմություն է տածել իր օրերի անվանի գուսան՝ Գուսան Աշոտի նկատմամբ: Նրա բանաստեղծությունների խոր հուզականությունն ու պատկերավորությունը, սիրո փառաբանումն ու բնության գովքն անչափ սրտամոտ է եղել երգչին: Եվ պատահական չէ, որ գուսանի շատ երգեր առաջին անգամ հնչել են Նորայր Մնացականյանի կատարմամբ, ու նա էլ մնացել է նրանց միակ կատարողը:

Թաթուլ Ալթունյանի հրավերով՝ Նորայր Մնացականյանը եղել է Հայաստանի Հանրապետության Պետական Կապելլա՝ երգի-պարի պետական անսամբլի մենակատար: Այստեղ աշխատել է Արաքսյա Գյուլզադյանի, Լուսիկ Քոշյանի, Շողիկ Մկրտչյանի և Վարդուհի Խաչատրյանի հետ: Այս ժամանակահատվածում, բացի իր՝ արդեն ավանդական դարձած Սայաթ-Նովյան երգացանկից («Քամանչա», «Թամամ աշխարհ պտուտ եկա», «Աշխարհումս ախ չիմ քաշի», «Աշխարհս մե փանջարա է», «Բլբուլի հիդ», «Արի ինձ անգաճ կալ», «Քանի վուր ջան իմ», «Չիս ասում»), կատարել է Շերամի («Սարեր, կաղաչեմ», «Էլի երկինս ամպել է», «Աննման տարազով»), Ջիվանու («Ձախորդ օրերը»), Հավասու («Ո՞ւր կերթաս», «Գարուն»), Շիրինի («Այգեպան»), Գուսան Աշոտի («Սերս վանքում Տաթևի», «Օջախում», «Հեռացել ես», «Մոր սերը», «Արի բաղերով», «Վարդաղբյուր»), Փիլոյի («Թռվռալեն գալիս եք») գործերը, ինչպես նաև քաղաքային ֆոլկլորի որոշ ստեղծագործություններ:

1953թ. Արամ Մերանգուլյանը երգչին պաշտոնապես հրավիրել է իր ղեկավարած՝ ՀԽՍՀ Պետական Հեռուստատեսության և Ռադիոյի ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլ՝ որպես մենակատար: Այստեղ Նորայրը տարիների ընթացքում մոռացությունից հանել, Մերանգուլյանի հետ մեկտեղ մշակել և ձայնագրել է մի շարք ժողովրդական, գուսանական, և հայ կոմպոզիտորների երգեր:

Նորայր Մնացականյանը ելույթներով և մենահամերգներով հանդես է եկել Հանրապետության բոլոր քաղաքներում, շրջաններում և մի շարք նախկին Խորհրդային Հանրապետություններում՝ Էստոնիա, Լիտվա, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեջան, Ղազախստան, Ուզբեկստան և մի շարք արտասահմանյան երկրներում՝ Սիրիա, Հորդանան, Լիբանան, Եգիպտոս, Իրաք, Թուրքիա, Քուվեյթ, Բահրեյն, Միացյալ Արաբական Էմիրություններ, Իրան, Բուլղարիա, Հունաստան, Կիպրոս, Ֆրանսիա, և Լյուքսեմբուրգ: Միջին արևելքում հյուրախաղերի ժամանակ՝ Ամմանում իր ունեցած ելույթից հետո, Մնացականյանն ստացել է հուշամեդալ՝ Հորդանանի Հուսեյն թագավորի կողմից: Հայրենիք վերադառնալուն պես, Նորայր Մնացականյանն անձնական շնորհակալագիր է ստացել Խորհրդային Միության մշակույթի նախարար Եկատերինա Ֆուրցեվայից՝ «արտերկրում Սովետական Հայաստանի կատարողական արվեստը պրոպագանդելու և պատշաճ կերպով ներկայացնելու համար»:

Նորայր Մնացականյանը մահացել է 1986 թ. մարտի 25-ին, Երևանում:

ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Նորայր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտայի հ.63 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Հասմիկ Մնացականյանի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ